Առևտրատնտեսական հարցերով հայ-վրացական համատեղ աշխատանքային խումբ

2014թ. մարտի 20-ից 22-ը Թբիլիսիում (Վրաստան) անցկացվել է առևտրատնտեսական հարցերով հայ-վրացական համատեղ աշխատանքային խմբի անդրանիկ հանդիպումը, երկրորդ հայ-վրացական համատեղ աշխատանքային խմբի հանդիպումն անցկացվել է 2014թ. դեկտեմբերի 24-ին, որի շրջանակներում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր առևտրի, արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի և այլ ոլորտներում երկու երկրների համագործակցության վերաբերյալ: Հայկական կողմից աշխատանքային խմբի ղեկավարն է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը: